ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Ֆոն Վենդրիխ և դատաստանական պահանջները Կովկասում.—Հայկական թատրոն։

Կովկասեան դատարանական շրջանը նորերս ողջունեց իւր նոր գլխաւորի գալուստը։ Պր. Գոնչարովի տեղ, որ Պետական խորհրդի անդամ նշանակուեց, Թիֆլիսի Դատարանական Պալատի աւագ նախագահ նշանակուած էր իսկական պետական խորհրդատու ֆոն Վենդրիխ, որ և ներկայ սեպտեմբերին ստանձնեց իւր պաշտօնը։ Մեծ են պարտականութիւնները առհասարակ պետական որ և է ճիւղի գլուխ կանգնած անձերի. կատարել պարտականութիւնները բարեխղճութեամբ և կատարեալ գիտակցութեամբ ստանձնած գործի նպատակներին ալնպէս, որ ընդհանուրի բարի ողջոյնները արժանանալ կարողանան իրանց գործավարութեան վերջում՝—ահա այն միսիթարանքը, որ միակ կարող է ամոքել գործերի ծանրութիւնը։

Թիֆլիսի Դատարանական Պալատը, ուրեմն և նորա աւագ նախագահը առանձին դիրք են բռնում Ռուսաստանի միւս դատարանական պալատների և նախագահների մէջ։ Այդ առանձին դիրքը այն հանգամանքի հետևանքն է, որ ռուսաց դատարանական վերանորոգութիւնը, որ տեղի ունեցաւ Ալեքսանդր II կայսեր 19 փետրու. 1864 թուականի հրովարտակով, չորս տարի լետոյ գործադրուեց մեր երկրին ոչ նոյնութեամբ, այլ մի քանի փոփոխութիւններով. իսկ այդ փոփոխութիւններից մի քանիսը մեծապէս փոփոխում են Թիֆլիսի Դատարանական Պալատի դիրքը։

Ցաւալի է, որ նոր դատաստանագրքի հիմնական սկզբունքներից մէկը այն է, որ դատաւորը «անփոփոխ» է, այսինքն նորան չի արձակում պաշտօնից կառավարութիւնը ուղղակի, այլ միայն դատարանի միջոցով։ Մինչդեռ Կովկասում դատաւորներին թէ նշանակում է և թէ հրաժարեցնում է կա-

ուավարութիւնը։ Այդ բանի մէջ ընականօրէն Թիֆլիսի Դատարանական պալատը ներգործական դեր է կատարում։

Յայտնի է նաև, որ երդուեալ դատարանի հիմնարկութիւնը մեղանում չը կայ, մինչդեռ այդ կայ Ռուսաստանում։ Ռուսաստանում այն, ինչ կատարում է երդուեալ դատարանը, մեզանում այդ կատարում են նահանգական դատարանները։ Իսկ սոցա վճիռները վերաքննելը և կամ նոր վճիռ կայացնելը պատկանում է Դատարանական Պալատին։

Նաև Ռուսաստանում հաշտարար դատարանը բոլորովին առանձնացած է ընդհանուր դատարանից՝ մինչդեռ Կովկասում նա ենթարկուած է նահանգական դատարանին, որը գործի վերաքննութեան աստիճան է կազմում։ Իսկ Թիֆլիսի դատարանական պալատը կազմում է վերջին և վճռաջինջ աստիճան նահանգական դատարանների համար։

Ահա այն առանձնայատկութիւնները, որոնցով որոշւում է Թիֆլիսի դատարանական պալատի դիրքը կայսերութեան միւս դատարանական հիմնարկութիւնների մէջ։ Դորանով որոշւում է նաև Թիֆլիսի դատարանական պալատի աւագ նախագահի դիրքը Կովկասի դատարանական շրջանում։ Արդէն բաւական է ասած, որ այդ դիրքը բաւականին բարձր է՝ նոյն իսկ երկրիս արդարադատութեան գործի ընթացքի վերայ զօրեղ ազդեցութիւն ունենալու համար։

Մեզանում դատարանական մի բարձր պաշտօնեայի համար միանգամայն գործին, այն է արդարադատութեան օրէնքների գործադրութեանը անձնատուր լինելը հնչտացրած է նորանով, որ այստեղ, գոնէ մամուլի մէջ, դուրթիւն չունին կուսակցութիւններ Ալեքսանդր II կայսեր Դատաստանական վերանորոգութեան Նկատմամբ։ Տեղական մամուլը միշտ ջերմ պաշտպան է հանդիսացել այն սկզբունքներին և այն ոգուն, որոնք հիմնաքարերն են նոր Դատաստանագրքի։ Վերադարձը դէպի նախարէֆորմեան ժամանակները, այսպէս կոչուած ուչաստկովվոյ զասէդատելների և «պոսլուխ»-ների ժամանակները—մամուլի մէջ ոչ ոք չի համարձակւել պահանջելու, այլ, ընդհակառակը, դատարանական վերանորոգութեան գործադրութիւնը մեր երկրում համարւել է որպէս Ռուսաստանի կողմից մեր երկրին արած ամենամեծ բարերարութիւններից մէկը։

Պէտք է ցաւել միայն, որ դատարանական վերանորոգութեան նկատմամբ Ռուսաստանի մամուլի մէջ ծագած լամառ երկպառակութիւնները, նորա մի աղդեցիկ մասի բռնած ըէակցիօնէրական դիրքը դանդաղացրել են վերանորոգութեան մասին լուրջ և անաչառ կերպով խօսելը, թերութիւնների հրապարակ հանելը։ Այդ հանգամանքը անշուշտ արտափայլել է նաև մեր տեղական դատարանական գործիչների և դրականութեան ու մամուլի վերայ, մինչդեռ նոր օրէնքների գործադրութիւնը մեր երկրում, որը աղգաղրական չատ առանձնայատկութիւններ է ներկայացնում, կարող էր լուրջ դիտողութիւնների տեղիք տալ և ամբողջ դրականութիւն ծնեցնել։

Բայց անկախ այդ աւելի ընդհանուր բնաւորութիւն ունեցող ուսումնասիրական պահանջներից, մեր երկրի դատարանական դրութիւնը կարող է Թիֆլիսի դատարանական պալատի աւագ նախագահի ուշադրութիւնը դրաւել երկու կողմերից. մէկ որ մեր տեղական իրաւաբանական ոյժերը ապարդիւն չը կորչեն, իսկ միւս կողմից որ երկրիս դատարանական պաշտօնները թափուր չը մնան։ Այդ երկու պահանջներն էլ իրար հետ սերտ կապ ունեն։

Իսկութիւնը սա է, որ հաշտարար դատարաններում, ինչպէս այդ վկայում է նաև «Նով. Օբոզրեն.», լաճախ դատաւորի պաշտօնը կատարում են ոչ թէ հաշտարար դատաւորները, այլ նոցա օգնականները, որոնք թէ իրանց աստիճանով և թէ իրանց ուռճիկով դատաւորներից և գաւառապետներից ստոր են, մինչդեռ նոքա իրանց ոյժերից վեր շատ գործեր ունին վճռելու։ Եւ բացի այն որ ձեռքերում շատ գործեր ունեն դատաւորները կամ սոցա օգնականները, դեռ գործերից շատ շատերը տեղական լեզուներ չը գիտենալու պատճառով՝ ստիպած են իրանց սուղ ժամանակը կորցնել՝ թարգմանների միջոցով վիճող կողմերի հետ խօսելու պատճառով։ Բայց վկայութիւններ են բերում, որ դատավարութիւնը թարգմանների միջոցով առնւազը երկու անդամ աւելի ժամանակ է խլում, քան երբ դատաւորը առանց միջնորդի է խօսում երկու վիճող կողմերի հետ։

Հայոց թատրոնը այս տարի ձեռք բերեց մի կազմակերպուած մշտական խումբ և մի հաստատուն բեմ, գոնէ մի սեզոնի համար։ Հասարակութիւնը տարիներ շարունակ պահանջում էր այն, ինչ այժմ իրագործուեց։ Անցեալ մայիսի 31-ին Թիֆլիսի ժողովարանի գումարուած թատերասէրների ժողովը առաջին դրական քայլն էր նպատակին հասնելու համար։ Այդ ժողովը դրական հետեանքներ ունեցաւ. և այդ հետեանքները այս եղան՝ պարզուեց, որ մօտագալ սեզոնին խումբ ունենալու համար չը պէտք է լոյս դնել հայոց «Դրամատիկական ակումբ» կոչուած իրապէս դեռ գոյութիւն չունեցող հիմնարկութեան վերայ։ Այդ հետեանքը չատ կարևոր էր, որովհետև մասնաւոր ժողովարարութեան դիմելը՝ խումբը ապահովելու համար՝ այդ համոզմունքի ծնունդ էր։ Այդ սկզբնա՛ղան ժողովի նախաձեռնողն էր դերասան պ. Պետրոսեան, որը ժողովում կարդաց իւր պրօեկտը՝ մշտական խումբ ունենալու մասին։ Պրօեկտի հիմնական կէտը այս էր, որ 2,500 բուբլու գումար հաւաքի, որպէսզի դորանից 2000 բուբլին ծառայէ որպէս ապահովութիւն Պոլսից հրաւիրելիք 3—4 դերասաններին և դերասանուհիներին, եթէ թատրոնի մուտքը ծախքերը չը ծածկելու դէպքում՝ թատրոնի գլուխ կանգնածները ստիպած լինեն ներկայացումները դադարեցնել։

Որ այդ առաջարկը համոզեցուցիչ էր, այդ իսկոյն երևաց, քանի որ

նոյն այդ առաջին ժողովում սկսեց ժողովարարութիւնը, որի չարունակելու համար ընտրեց մի յանձնաժողով, բաղկացած այս անձերից՝ պ. Ալ. Թարխանեան, Դ. Տէր-Նիկողոսեան և Յովհ. Յովհաննիսեան։ Այդ յանձնաժողովը յանձն առաւ՝ ժողովարարութիւնը մինչ 2,500 բուբլին հասցրած լինելուն պէս՝ կրկին ժողովի հրաւիրել բոլոր նուիրատուներին՝ թատրոնի գործի մասին վերջնական վճիռ կայացնելու համար։

Յանձնաժողովի ջանքերը յաջողութեամբ պսակուեցին. մի ամիս չանցած՝ 2500 բուբլու դումարը ստորագրուեց՝ մի բուբլուց սկսած մինչ երկու հարիւր բուբլի նուիրող անձերից։ Հետեւապէս նուիրատուներից կազմուեցին առաջին (28 յունիսի) և երկրորդ ու վերջին 11 յուլիսի ժողովները։ Այդ վերջինում, մասնակցութեամբ մօտ 40 հոգու, վճռուեց թատրոնական գործը և գումարած 2500 բուբլին յանձնել հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողովի, այս պայմաններով. 1891/92 տարուայ սեզոնին, մինչ մեծ պասը ամիսը տալ չորս ներկայացում. դորա համար կազմել մի մշտական խումբ, տեղական և Պոլսի դերասաններից և դերասանուհիներից, հաւաքած գումարից 500 բուբլու չափ յատկացնել Պոլիս մէկին ուղարկելու՝ դերասաններ հրաւիրելու համար, միւս 500 բուբլին տալ նրանց պայման կապած բոպէից, իսկ մնացած 1500 բուբլին պահել ապահովութեան համար։ Մասնաժողովը պարտաւորւում է սեզոնի վերջը հաշիւ ներկայացնել ընդհանուր ժողովին։

Մասնաժողովը կազմելու համար կատարուեցին ընտրութիւններ դաղտնի քուէարկութեամբ։ Ձայների առաւելութեամբ ընտրուեցին հետեւեալ՝ պպ. իշխ. Նապ. Ամատունի, Ալէքսանդր Թարխանեանց, Յովհ. Յովհաննիսեանց, տիկին իշխանուհի Մ. Բէքթաբէգեան, պպ. Դ. Տէր-Նիկողոսեան, Կոնստ. Հէջուբեան և Շիրանդաղէ։ Հետեւապէս դոցանից առաջին հինգը ճանաչուեցին մասնաժողովի անդամներ, իսկ վերջին երկուսը՝ փոխ-անդամներ։ Ընտրածներից իշխ. Ամատունին և իշխանուհի Մ. Բէքթաբէգեան բացակայ էին. առաջինը հրաժարուեց, երկրորդը ընդունեց, այնպէս որ մասնաժողովը այժմ կազմուած է հետեւեալ հինգ անձերից՝ Ալ. Թարխանեան, Յովհ. Յովհաննիսեան, իշխանուհի Մ. Բէքթաբէգեան, Դ. Տէր-Նիկողոսեան և Կոնստ. Հէջուբեան. փոխանդամ՝ Շիրանդաղէ։

Այս մասնաժողովի կազմը չափազանց տարբերւում է այն մասնաժողովից կամ կոմիտէից, որ նման նպատակով կազմուած էր 1879 թուականին։ Դա այնքան բնորոշ է, որ արժէ նկատողութեան առնել։ Յամենայն դէպս դա ցոյց է տալիս որ այս տասը—տասներկու տարիներում ամենինչ նոյնը չի մնացել, և որ հասարակական գործերի նկատմամբ չատ գաղափարներ լեղաշրջուել են։ Մի տասնեակ տարի առաջ ամեն մի հասարակական գործ անպատճառ կապւում էր որոշ անձերի անունների հետ, լինէր դա թատրոն, թէ բարեգործական ընկերութիւն, գրքերի հրատարակութեան ընկերութիւն, անդամ մամուլ և այլն։ Այդ վերին աստիճանի

կաչկանդում էր հալի միտքը, հետևապէս և հայ հասարակութեան գործերի յառաջդիմական ընթացքը։ Անունների պաշտամունքը—անա թէ ինչն էր բնորոշում տասնեակ տարի առաջ ժամանակը՝ ներկայ ժամանակից։ Նոր-հաւորել պէտք է հասարակութիւնը իրերի այդ տեսակ փոփոխութեան համար։ Քննադատութիւնը հէնց այդ պատճառով ամենևին չի դադարում նաև նորերի համար. քննադատութեան ենթակայ են թէ հները և թէ նորերը, և ինչ յատկապէս վերաբերում է թատրոնական ժողովներին, և թատրոնական ներկայ մասնաժողովին, նոքա ներկայացնում են մի կատարեալ խառնուրդ մեր հասարակութեան ամեն տեսակ, իրար հետ շատ քիչ դաղափարական յարաբերութիւն ունեցող անձերի։ Ես վկայում եմ այստեղ միայն իրողութիւնը, բոլորովին միտք չունենալով դորանով որ և է յանդիմանութիւն անել ում և իցէ։ Ես այդ ասում եմ քայլ առ քայլ հետևելու համար մեր թատրոնական գործի յառաջդիմութեան ընթացքին։ Յառաջդիմական եմ ասում, որովհետև, չը նայած որ մասնաժողովի անդամները բոլորովին տարբեր և նոյն իսկ թատրոնական գործին անծանօթ մարդկանցից է կազմուած, այնու ամենայնիւ նա ծնունդ է մեր հասարակութեան լաւ ձգտումների և անդամների ընտրութիւնը կատարել է ազատ, առանց կոզմնակի աղդեցութիւնների, մասնակցութեամբ այնպիսի անձերի, որոնք միայն հալկական բեմը վերականգնելու դաղափարն են ի նկատի ունեցած։ Ով է մեղաւոր, որ հայ հասարակութիւնը մինչ այժմ չի կարողացել դուրս բերել թատրոնական գործին քաջահմուտ անձեր, բայց անձեր, որոնց գործավարութեանը լիապէս կարողանար հաւատալ հասարակութիւնը։

Այն, ինչ կամեցել էր ընտրող հասարակութիւնը, իւր ընտրութիւնները կատարելիս, այս էր, որ մասնաժողովը կարողանայ իրագործել հասարակութեան մի քանի պահանջները։ Միանգամայն համոզուած լինելով, որ հալկական բեմի հրապոյրը, ներկայումս գոնէ, կապուած է պոլսական ոյժերի մասնակցութեան հետ, հասարակութեան սպասելիքներից մէկը այն էր, որ հարկաւոր ոյժերը հրաւիրուեն։ Մասնաժողովը այդ կատարեց, առանց արհամարհելու տեղական ոյժերին։ Մասնաժողովը գովելու արժանի խոհեմութեամբ սկսեց կազմել ռէպէրտուարը, որը թէ պէտք է ոյժերին համեմատ լինէր և թէ ուսանելի լինէր հասարակութեան համար։ Մասնաժողովի կողմից դեռ ևս օգոստոսի վերջերին յայտարարուած պիեսների անուններից պարզ կարելի էր տեսնել, որ մասնաժողովը դիտացել է օգտուել հասարակութեան մէջ հաստատուած մտքերից ռէպէրտուարի մասին։ Եւ իրօք ռէպէրտուարից դուրս են այնպիսի պիեսների անուններ, որոնք կարող են խաղացուել միմիայն բարձր դրամատիքական ոյժերի մասնակցութեամբ։ Հանդուցեալ Աղամեանի փչատակը յարգուել է, որպէս և պէտք է յարգուէր. և որքան նա ընտելացրել է հայ հասարակութիւնը չէքսպիրեան պիեսներին, նոյնքան էլ մասնաժողովը

խոհեմ է դտնուել, համապատասխան ոյժերի պակասութեան պատճառով, այդ տեսակ պիեսներից հեռու կանգնել։ Դորա փոխարէն ռէպերտուարի մէջ ես գտնում եմ աշնպիսի պիեսների անուններ, որոնց հետ ծանօթութիւնը միանգամայն անհրաժեշտ է հայ հասարակութեան համար։ Դոցա թուումն են արդէն խաղացուածներից՝ Կամելիադարդ տիկին, Ալեքսանդր Դիւմա-որդու և Տարտիւֆը, Մոլիէրի։ Դոցա մէջն են դեռ ևս չը խաղացուածներից՝ Վերաքննիչը Գոգոլի և ուրիշներ. ռէպերտուարի մէջ են նաև հայկական նոր գրուածքներ, որոնք դեռ իրանց առաջին փորձին են սպասում, ինչպիսին է պ. Լևոն Մանուէլեանցի «Տիգրանուհին»։ Կան նաև պիեսներ, որոնց յաջողութիւնը մեր բեմի վերայ թէև գժւար է գուշակել, բայց որոնց փորձելը գոնէ դերասանների համար ուսանելի կարող է լինել. այդպիսիներից են Մարիա Ստիւարտ Շիլլերի, Խնքից պատուհաս Գրիբոյեդովի, Աւազակներ Շիլլերի, և ուրիշներ, որպէս նաև խաղացուածներից՝ Դիւմայի «Կամելիադարդը»։

Ես պէտք է այս մի ընդհանուր նկատողութիւնն անեմ, որ մեր հայկական այժմեայ թատրոնը ոչ միայն հասարակութեանը յաջող խաղեր պէտք է տայ, այլ և նա պէտք է փորձ ու դպրոց ծառայէ դերասանների համար։ Դերասանների մեծագոյն մասի համար այս սեզոնին տրուելիք պիեսները նոր են և, եթէ այդ դերասանները նոր չեն բեմ դուրս գալիս, բայց և այնպէս լուրջ խմբի մէջ և լուրջ հասարակութեան համար տեղապէս աշխատած դերասաններ չեն։ Բնական է, ուրեմն, որ ոչ միայն հասարակութեանը յայտնի չեն նոցա ոյժերը, այլ և իրանց՝ դերասաններին լաւ յայտնի չէ իրանց ոյժերի չափը՝ իրանց դեռ ևս անծանօթ պիեսներում։ Իսկ տրուելիք պիեսների մեծագոյն մասը, կրկնում եմ, նոյն իսկ իրանց դերասաններին՝ կամ բնաւ ծանօթ չէ կամ միայն թոյլ չափով յայտնի է։ Մեր դերասանական ոյժերը դեռ ևս այսպէս ասած՝ կրակից անցած չեն, այնպէս որ այժմեայ թատրոնը նոցա համար մի տեսակ վարժոց է հանդիսանում։ Մի պիեսի արժանաւորութիւն ամեն անգամ դժւար է ճանաչել նրանից, թէ նա ինչ յաջողութիւն ունեցաւ մեր բեմի վերայ. և դա այն պարզ պատճառով է, որ այժմեայ ոյժերը դեռ ևս վերջնականապէս չեն դասաւորուած և վերջնականապէս էլ յայտնի չէ, թէ խումբը մշտական դարձնելու և երկար տարիներ պահպանելու համար՝ ինչ ոյժեր են պակսում։ Երբ մի պիես, թէկուզ մի նոր պիես խաղացւում է Պարիզի Coméndie française թատրոնում և հաւանութիւն չի գտնում՝ շատ տակաւ կը պատահի որ մեղը գցեն դերասանների վերայ։ Ընդհակառակը շատ սոլորական ոճ է թատրոնական ռէցէնզիաներում կարդալ այսպիսի խօսք՝ «այս ինչ դերասանը իւր բոլոր ճիգը թափեց իւր դերը ազատելու համար, բայց չը յաջողեց»։ Եւ այդ հասկացւում է այս մտքով, որ դերը դեր չէր կամ պիեսը անաջող էր։ Ինչու? որովհետև փորձով գիտեն խաղացող դերասանների

ոյժը, գիտեն, որ եթէ այդ տեսակ դերասանների խաղում պիեսը յաջողութիւն չունեցաւ—էլ դուր է լաւագոյն խաղ սպասելը։ Բնական է, որ թատրոնական վարչութիւնն էլ քաջ դիտէ իւրաքանչիւր դերասանի ամպլուան, և դժուար կը պատահի որ փորձեն մի էնժէնիւ դերասանուհուն դիցուք հերոսուհու դեր տալ, սիրահարականին՝ դրան-պրէմիէ՛ի դեր յատկացնել և այլն։

Ահա ինչու ես ասում եմ, թէ մեր դերասանական ոյժերը դեռ ևս փորձի շրջանումն են այս սեղոնին՝ նոցա ոյժերը ոչ հասարակութեանն են լաւ յայտնի և ոչ հէնց իրանց դերասաններին։ Յայտնի է միայն այս, որ ընդհանրապէս խմբումը կան գնահատելի և հետաքրքրական ոյժեր, որոնց ամպլուաները դեռ ևս ժամանակով պէտք է որոշուեն։ Այս նկատողութիւնը ես ճիշդ եմ համարում ոչ միայն խմբի աւելի քիչ փորձուածների համար, թերևս բացառութեամբ պ. պ. Պետրոսեանի և Ցէր-Դաւթեանի, —այլ նոյն իսկ տիկին Սիրանուշի համար, որը ներկայ խմբի աստղն է։ Մինչև աւելի պարզելու համար ես կը վերցնեմ իբր օրինակ սեպտ. 19-ի ներկայացումը։ Ես չը գիտեմ, թէ օր. հէնց տիկին Սիրանուշը խաղացել էր երբէք Մարդարաի դերը Կամիլիաղարդում։ Բայց ես գտնում եմ, որ նորա խաղը հետաքրքրական էր։ Ես մեծ թերահաւատութեամբ գնացի թատրոն այդ երեկոյ, և առաջին գործողութիւնը կարծես արդարացնում էր իմ թերահաւատութիւնը։ Հետևեալ գործողութիւնները եկան ապացուցելու, որ ես իղուր էի այդքան թերահաւատ, որովհետև ես մինչև վերջ հետաքրքրութեամբ հետևեցի տիկին Սիրանուշի խաղին։ Այդ ինձ համար ապացոյց էր, որ տիկին Սիրանուշը իմ սպասածից շատ աւելի լաւ խաղաց. իսկ ընդհանուր տպաւորութիւնը այնպէս էր, որ իմ մէջ ցանկութիւն յղացաւ այդ դերասանուհուն մի երկրորդ անգամ տեսնել նոյն դերում, աւելի որոշ կարծիք կազմելու համար նորա խաղի մասին, կարծիք, որի կազմելուն շատ ՀԼԱՍԵց իմ սկզբնական թերահաւատութիւնը, որի ազդեցութիւնից դեռ պէտք էր աղատուել որպէս մի նախապաշարմունքից. ՀԼԱՍԵց թերևս նաև այն, որ տիկին Սիրանուշի հետ գլխաւոր դեր կատարողը թոյլ էր Արման Դիւալի դերում։ Իսկ եթէ ճշմարիտ է որ ներկայ սեղոնը դերասանների համար գլխաւորապէս նախապատրաստուելու սեղոն է, ապա ուրեմն մասնաժողովը լաւ գործ կատարած կը լինի, եթէ առաջին անգամ ոչ կասարելապէս յաջողած, բայց յաջողութիւն խոստացող ներկայացումները սեղոնի ընթացքում կրկնէ և թոյլ տայ առաջին մեծ փորձը անցկացրած դերասաններին՝ կրկին երևան գալ։ Դուրս կը գայ տիկին Սիրանուշը այդ երկրորդ անգամում ՀԱՂԹՈՂ, այն ժամանակ հայկական բեմը կանձին տիկին Սիրանուշի վաստակած կը լինի մի նոր ոյժ, որովհետև մի բան, որ հասարակութեան համար վերջնականապէս հաստատուում է—դա վաստակած խնդիր է. և Մարդարտի դերը, եթէ կարողանայ վերջնականապէս հաստատուել տիկին Սիրանուշի վերայ՝ կը լինի մի վաստակ թէ իրան դե-

բասանուհու, թէ հասարակութեան և թէ հալկական ներկայ խմբի համար առ.հասարակ։ Բնական է որ պ. Աբէլեանցը, որ այնքան անտեղի էր Դիւ-ւալի դերում, դեռ ևս փորձերի և խելացի խորհուրդների կարօտ է՝ իւր ամպլուան որոշելու համար։ Ահա այդ մտքով եմ ասում թէ ներկայ սեզոնի թատրոնը մեր խմբի դերասանների համար մի դպրոց է. այս օէղոնում այդ ոյժերը պէտք է իրանց ամպլուաները դրականապէս որոշեն։ Վատակ չէ արդեօք որ «Ֆարտիւֆ»-ի մէջ մենք այժմ ունենք Օրգոնի համար պ. Վրոլրին։

Յամենայն դէպս այժմեայ դերասանական խմբի վերայ մեծ պարտականութիւններ են դրուած։ Խումբը պէտք է ի նկատի առնի, որ այժմեա հալկական բեմը, երկար տարիներից յետոյ նորից յարութիւն է առել չնորհիւ մեծամեծ ջանքերի։ Ուստի նա, այդ խումբը ունի այս բոպէին հասարակական կարեոր դեր կատարելու. դալ տարի մեր թատրոնի լինել— չը լինելը մեծ մասամբ կախուած կը լինի նորանից թէ այժմեայ խումբը և մասնաժողովը ինչպէս կը տանեն իրանց գործը մինչ սեզոնի վերջը։ Ինչ վերաբերում է մասնաժողովին՝ պէտք է վկայել որ, ընդհանուր առմամբ, նա ջանք գործ է դրել ռէպերտուարի և խմբի կողմից հասարակութեանը որոշ չափով բաւարարութիւն տալու։ Թէ ինչպէս կը վարի իւր գործը ապուհետև, կը տեսնենք։ Խմբին առ այժմ կ'ուզեմ մի քանի կարճ խօսքեր՝ թող դերասանները լանձն առնեն դերերը ոչ նոցա կարևորութեան, այլ իրանց ոյժերի համեմատ. և երկրորդ՝ թող որ նոքա իրանց դերերը լաւ սովորեն, միշտ յուշարարի օգնութեանը չը դիմելու համար։

Լ. ՈՒՍԻՆԻ